



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ՍՓԻՒՔԻ ՀԱՐՑԵՐՈՒ ՆԱԽԱՐԱՐ ՀՐԱՆՈՅՇ ՅԱԿՈՒԲԱՆ ԱՅՑԵԼԵՑ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի տարեկան թելեթոնին ներկայ ըլլալու համար Լուս Անճելլըս իր այցելութեան առիթով, Հայաստանի կառավարութեան անդամ եւ Սփիւռքի հարցերու առաջին նախարար Հրանոյշ Յակոբեան Հինգշաբթի, 20 Նոյեմբերի կէսօրին այցելութիւն մը տուաւ Ազգային Առաջնորդարան եւ տեսակցութիւն ունեցաւ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի հետ: Յարգելի նախարարին կ'ընկերանային Հայաստանի գլխաւոր հիւպատոս Արմէն Լիլոյեան եւ հիւպատոսութեան պաշտօնատարներէ բաղկացած պատուիրակութիւն մը:

Հիւրընկալման ներկայ էին, Առաջնորդ Սրբազանին կողքին՝ Մեծի Տանն Կիլիկիոյ միաբանութեան երեց անդամներէն՝ Բարձր. Տ. Եփրեմ Արք. Թապագեան, Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիքիճեան, Միացեալ Հայկական Հիմնադրանի տնօրէն Տիար Յարութ Սասունեան, Հոգեւորականաց դասու անդամներ, Կրօնական Ժողովի ու Ազգային Վարչութեան ներկայացուցիչներ, մեր եկեղեցիներու հոգաբարձութեանց ատենապետներ, Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինի անդամներ, Ազգ. Վարժարաններու Խնամակալ Մարմինի ներկայացուցիչներ, տնօրէններ ու մանկամտօրի վարիչներ, ինչպէս նաեւ Ազգ. Առաջնորդարանի բարերարներ ու գործարար ազգայիններ:

Յարգելի հիւրերը Ազգ. Առաջնորդարան ժամանեցին կէսօրին. Առաջնորդ Սրբազանն ու ժողովականութեան ներկայացուցիչներ առաջին հերթին դահլիճին մէջ ունեցան պաշտօնական կարճատեւ հանդիպում մը: Առաջնորդ Սրբազանը յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռի գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին ու Թեմիս ժողովականութեան ողջունեց հիւր նախարարուհին, որ իր կարգին, գոհունակութիւն արտայայտեց այս այցելութեան համար ու վեր առաւ Հայց. Առաքելական եկեղեցւոյ դերը հայ ժողովուրդի կեանքին մէջ: Հանդիպումը ապա շարունակուեցաւ »Տիգրան եւ Չարուհի Տեր Ղազարեան« սրահին մէջ, ճաշի սեղանի շուրջ, մտերմիկ ու հոգեհարազատ մթնոլորտի մէջ, մասնակցութեամբ ժողովական ներկայացուցիչներու եւ ազգայիններու: Արտասանուեցան սրտի ու ողջոյնի

խօսքեր. Արժ. Տ. Վիգեն Ա. Քհնյ. Վասիլեան կատարեց հանդիսավարութիւնը:

ՄՐՏԻ ԽՕՍՔԵՐ

Սեղաններու օրհնութեան ու հաւաքական աղօթքէ ետք, առաջին հերթին տեղի ունեցաւ փոխադարձ ծանօթացում:

Խօսք առաւ Ազգ. Վարչութեան փոխ ատենապետ Տիար Կարօ Աւագեան: Ազգ. Վարչութեան անունով նախարարին ներկայութիւնը ողջունելէ ետք, ան վեր առաւ Ազգ. Առաջնորդարանի ծառայական կեանքը ու մասնաւորաբար կեդրոնացաւ ազգային վարժարաններու հայապահպանման ու սերնդակերտ առաքելութեան վրայ: Ան յոյս յայտնեց, որ Սփիւռքի հարցերու նախարարութեան ստեղծումով, յատկապէս այս մարզին մէջ գործակցութիւնն ու կապերը զարգացում ապրին:

Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիքիճեան, ողջոյնի իր խօսքէն ետք, յոյս յայտնեց, որ նոր նախարարութեան ճամբով, հայրենիքին ու հայկական Սփիւռքին միջեւ գործակցութիւնը աւելի եւս սերտանայ. ան մաղթեց, որ նախարարուհիին «գործունեութիւնը իրագործէ այն ապրումն ու զգացումը, որ ան ամբողջ սփիւռքին գուրգուրացող մօր նման է. եթէ այս մօտեցումը իրագործէք, արդէն ձեր գործը յաջողած պիտի ըլլայ», ընդգծեց Տիար Տիքիճեան, նկատել տալով, որ յառաջիկայ Դեկտեմբերին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգ. Ընդհանուր Ժողովին, վստահաբար այս նախարարութեան առաքելութիւնն ու անոր հետ գործակցութեան նոր դաշտերը հանգամանօրէն պիտի քննարկուին:

Ապա, խօսք առաւ Տիար Յարութ Սասունեան, որ նախարարուհիին հետ իր անձնական ծանօթութենէն մեկնելով, հաւաստեց, թէ «Սփիւռքի մայրաքաղաք» Լոս Անճելըս այցելող Զրանոյշ Յակոբեան հմուտ, աշխատունակ ու կորովի ծառայող մըն է. ան յոյս յայտնեց, որ նախարարութեան ծրագիրներուն մշակման ամբողջացումէն ետք, գործադրութեան փուլը նոր մակարդակ ու լայն տարողութիւն կը խոստանայ Զայաստան-Սփիւռք գործակցական յարաբերութեանց: Ան նաեւ նկատել տուաւ, որ Սփիւռքի նախարարութիւնը պիտի ըլլայ սփիւռքահայութեան ու գործարարներուն տունը, որ պիտի փորձէ պատասխան ու լուծում ապահովել գործակցական հարցերուն, ըլլալով բոլոր նախարարութեանց հետ կամուրջ մը:

Տիկնանց Օժանդակ Մարմինի անդամ Տիկին Մարիամ Կարապետեան եւս արտասանեց ողջոյնի խօսք ու ծաղկեփունջով մը պատուեց նախարարուհին:

«ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՈՒ ԱՄԲՈՂՋ ՍՓԻՒՐՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ»

Այնուհետեւ, իր սրտի խօսքը արտասանելու հրաւիրուեցաւ Առաջնորդ Սրբազանը: Ան առաջին հերթին վեր առաւ այն իրողութիւնը, որ հայութիւնն ու Զայաստանը առաջին անգամ ըլլալով կ'ունենան Սփիւռքի

Նախարարութիւն, իսկ նախարարին առաջին այս այցելութիւնը յարմար առիթ է հարազատ հաղորդակցութեան ու սրտբաց խօսակցութեան:

Հակիրճ կերպով անդրադառնալով հիւր նախարարին բազմերես վաստակին, Առաջնորդ Սրբազանը համոզում յայտնեց, որ անոր գլխաւորած նախարարութիւնը համապարփակ գործակցութիւն պիտի իրականացնէ Սփիւռքի բոլոր օճախներուն ու միաւորներուն հետ, նկատի ունենալով որ խորհրդային տարիներուն, Սփիւռքի հետ կապի կոմիտէն կը գործէր օրուան հարկադրած տրամաբանութեամբ ու որոշ ոլորտներու հետ կապերով, առաւելաբար կեդրոնանալով մշակոյթի կալուածին վրայ: «Այս նախարարութիւնը, ըսաւ ան, վստահաբար պիտի գործէ ամբողջական Հայաստանի, ամբողջական Սփիւռքի ու ամբողջական հայութեան սկզբունքով»:

Առաջնորդ Սրբազանը այս առիթով հիւր նախարարին ուշադրութեան յանձնեց, որ ամերիկեան այս ասիերուն ներկայիս կը յիշատակուի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ծառայական կեանքի 50րդ տարեդարձը, աշխատանք մը՝ որ սկսաւ ամերիկահայութեան հոգեկան կարիքներուն ընդառաջ երթալու պատրաստակամութեամբ: Ան նկատել տուաւ, որ Ս. Աթոռը ունի սփիւռքեան մեծ փորձառութիւն, որ կրնայ ի սպաս դրուիլ նորակազմ նախարարութեան, այն համոզումով, որ սփիւռքեան գաղութներու մէջ ծանօթ տարբերակումները պիտի չխոչընդոտեն այն իրողութիւնը, որ Հայաստանն ու Սփիւռքը կը պատկանին բոլորիս, անոնց միջեւ կամուրջներու կերտումը անհրաժեշտ կը դարձնէ բոլորի գործակցութիւնը: Առաջնորդ Սրբազանը այս առիթով նախարարին ու ներկաներուն փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ Արամ Ա. Կաթողիկոսի օրհնութիւնը, ողջոյններն ու բարեմաղթութիւնները:

Սկատել տալով, որ նախարարին այս այցելութիւնը տեղի կ'ունենայ թելեթոնին առիթով, Առաջնորդ Սրբազանը ցաւ յայտնեց, որ հանգանակային արշաւին օրը, անձամբ ներկայ պիտի չըլլայ թելեթոնին, որովհետեւ Վեհափառ Հայրապետին շքախումբին միանալով՝ պիտի գտնուի Վատիկան, Ն. Ս. Պենետիկտոս ԺԶ. Պապին հետ տեսակցութեան համար: «Այսուհանդերձ, հոգով ու սրտով ձեզի հետ պիտի ըլլանք հայրենանուէր այս գործին մէջ, որ արդէն գեղեցիկ ու արդիւնաբեր աւանդութիւն դարձած է մեր ու սփիւռքեան այլ գաղութներու համար», ըսաւ Առաջնորդ Սրբազանը եւ իր խօսքը եզրափակեց ընդգծելով, որ Հայաստանն ու Սփիւռքը կը կազմեն ամբողջական հայութեան զոյգ աչքերը, զոյգ ձեռքերը, զոյգ ականջներն ու զոյգ թոքերը, որոնք միասնաբար պիտի գործեն ու ծառայեն մեր հայրենիքին ու ժողովուրդին:

«ՃԻՇԴ ՈՒՂՈՐԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ»

Նախարար Հրանոյշ Յակոբեանը ներկայացնելու համար խօսք առնելով, Հայաստանի հանրապետութեան գլխաւոր հիւպատոս Տիար Արմէն Լիլոյեան նախ կանգ առաւ նոր նախարարութեան ծնունդ տուող պայմաններուն վրայ, նշելով, որ թելեթոնին առիթով տեղի ունեցող այս այցելութիւնը ունի նոյնքան կարեւոր այլ նպատակ մը՝ ծանօթանալ այս գաղութին ու միաւորներուն, որպէսզի մէկ ու կէս ամիս առաջ հաստատուած

Նախարարությունը ճիշդ ուղորդուի: Ան նկատել տուաւ, որ այս նախարարութեան ստեղծումը քաղաքական նշանակութիւն ունէր եւ ընդառաջ կ'երթայ սփիւռքեան ակնկալութեանց: Ան հաստատեց, որ աշխատանքները պիտի զարգանան լուրջ ուսումնասիրութեամբ ու ժամանակակից աշխարհի տուեալներուն ու պահանջներուն համապատասխանաբար, Հայաստանի ու Սփիւռքի միջեւ լիարժէք գործակցութեամբ եւ նախարարութեան գործի աշխարհին Սփիւռքի մասնակցութեամբ:

Յարգոյ գլխաւոր հիւպատոսը ապա ներկայացուց նախարարուհիին ասպարէզին հիմնական գիծերն ու կալուածները, սկսելով համալսարանական տարիներէն, մինչեւ պետական ու կառավարական մակարդակի ծառայութիւնները: Վերջապէս, ան հրաւիրեց Տիկին Հրանոյշ Յակոբեանը արտասանելու իր խօսքը:

«ՄԵՆՔԻ ԶԳԱՅՈՒՄԸ՝ ՄԵՐ ՈՒԺԻ ԱՂԲԻՒՐԸ»

Նախարար Հրանոյշ Յակոբեան առաջին հերթին շնորհակալութիւն ու գոհունակութիւն յայտնեց ընդունելութեան համար եւ հաստատեց, թէ առաջին այս այցելութեան առիթով իսկ, ինքզինք կը զգայ հարազատ տան մէջ: Ան ձայնակցեցաւ այն մտածումին, որ հայութեան երկու հատուածները կը նմանին զոյգ թռչերով շնչող մարմինի, որ ունի մէկ սիրտ ու մէկ հոգի: Ան վեր առաւ գործակցութեան կենսական կարեւորութիւնը ու նշեց, որ »երբ մարդս կ'արտայայտուի ես-ով, աւելի տկար կը զգայ, մինչդէռ երբ ըսենք Մենք, սա ուժի, ինքնավստահութեան աղբիւր կը դառնայ, Մենք-ով կրնանք աշխարհը շուռ տալ«:

Անդրադառնալով հայութեան երկու թելերուն միջեւ գործակցութեան փորձառութեանց, նախարար Յակոբեան հաստատեց, որ Հայաստանը յաճախ Սփիւռքը զգացած է իր կողքին, ինչպէս՝ Արցախեան Շարժումին, 20 տարի առաջ տեղի ունեցած երկրաշարժին ու այլ ճգնաժամային պահերու: Ներկայիս ալ Հայաստանը, Արցախն ու Սփիւռքը կը շարունակեն գոյապայքարը, իւրաքանչիւրը ունի իր դիմաց կանգնող մարտահրաւերներ, զորս պիտի յաղթահարենք գործակցութեամբ ու աշխատանքով: Ան անդրադարձաւ Սփիւռքի կարեւորութիւնը գործնապէս ըմբռնելու Հայաստանի իշխանութիւններու քայլերուն, որոնց շարքին էին Սփիւռքի նախարարութեան ստեղծումը, երկքաղաքացիութեան օրէնքի հաստատումն ու հայութեան զաւակները սահմանադրականօրէն համահաւասար նկատելու որոշումները: Ան հաստատեց, որ նախարարութիւնը պիտի ըլլայ ողջ հայութեան ու ամբողջ Սփիւռքի նախարարութիւնը, որ քաղաքականի, բարոյականի եւ հոգեբանականի կողքին՝ պիտի ըլլայ նաեւ ազգային արժէք, պիտի ըլլայ Սփիւռքի ձայնը՝ Հայաստանի կառավարութեան մէջ:

Սփիւռքի հարցերու նախարարը նկատել տուաւ, որ այս աշխատանքը ունի երեք հիմնական խնդիր, հետեւաբար՝ համապատասխան գործի ասպարէզներ: Առաջինը՝ հայապահպանումն է, այսինքն՝ այն առաջադրանքն ու առաքելութիւնը, զոր Սփիւռքը յանձն առած էր իր ստեղծման առաջին օրէն ի վեր, հայ մնալու որոշումով ու այդ ուղղութեամբ

ահագին ճիգերով: Ան այս ծիրին մեջ գնահատանքով արտայայտուեցաւ Մեծի Տանն Կիլիկոյ Կաթողիկոսութեան պատմական արժէք ունեցող գործին ու առաքելութեան, աւելցնելով, որ նախարարութեան ծրագիրները ներկայացուցած են հայկական կեանքի բոլոր միաւորներուն՝ կուսակցութեանց ու միտքի կեդրոններուն: Երկրորդ առաջադրանքն է հայութեան ներուժին յայտնաբերումը, նկատի ունենալով, որ սփիւռքի գաւակներ յաջողութիւններ արձանագրած են տարբեր ոլորտներու մէջ, ու այս կարողականութիւնը կարելի է ներգրաւել նախարարութեան ու ընդհանրապէս Հայաստանի ծրագիրներու կենսագործման մէջ: Իսկ երրորդ՝ հայրենադարձութեան կենսագործումը: Հայրենադարձութիւնը լոկ ֆիզիքական վերադարձի տեսանկիւնէն պիտի չդիտուի, այլ նկատի պէտք է առնել հոգիով ու սիրտով հայրենիքին կապուիլը: «Պէտք է աշխարհը տեսնէ, իմանայ, որ հայութիւնը լոկ երեք միլիոնի թիւ չէ, այլ 10 միլիոննոց ժողովուրդ, Հայաստանը, Արցախն ու Սփիւռքը միաձոյլ ամբողջութիւն են, հայութիւնը անցեալ դարասկիզբի ջարդուած ժողովուրդը չէ, այլ վերականգնած ուժ է, մեր շրջապատն ու աշխարհը պէտք է գիտնան, թէ որով հետ գործ ունին», յայտարարեց ան: Վերջապէս, ան անդրադարձաւ նախարարութեան գործնական աշխատանքներու եւ ծրագիրներու անմիջական հանգրուաններուն մասին, յիշատակելով սփիւռքագիտութեան ամպիոնի ստեղծումը Երեւանի համալսարանին մէջ, հայրենիք այցելութեան համար նոր դիւրութիւնները, եւ այլ քայլեր: Ան իր խօսքը եզրափակեց շեշտելով, որ հայութիւնը պիտի գործէ իր երկու ձեռքերով, որոնցմէ մէկը պիտի ծառայէ ինքզինքին օգնելու, իսկ երկրորդը՝ հայրենիքին ու հայութեան օգնելու համար:

Հանդիպումի աւարտին, նախարար Զ. Յակոբեան պատասխանեց ներկաներու կարգ մը հարցումներուն, ու այս ճամբով, յաւելեալ լուսաբանութիւններ տուաւ յատկապէս կրթական կալուածին մէջ նախատեսուած ծրագիրներուն մասին, որոնք նկատի ունին տարբեր մակարդակներ ու գաղութներու տարբերութիւնները: Ան շեշտեց կարեւորութիւնը գաղութներու գաւակներուն դէպի հայութիւն դարձին, նկատել տալով, որ արդի աշխարհի տրամադրած արհեստագիտական միջոցներն ալ պիտի օգտագործուին, օրինակի համար՝ հեռակայ ուսուցման գործին մէջ: Վերջապէս, ան կոչ ուղղեց, որ պատանիներ երիտասարդներ յաճախ այցելեն Հայաստան, ծանօթանան անոր տարրին ու ոգիին, ինչ որ ակնարկուած հայրենադարձութիւնը պիտի վերածէ գործնական կացութեան:

Աւարտին, տեղի ունեցաւ յուշանուէրներու փոխանակում: Առաջնորդ Սրբազանը նախարարին յանձնեց Ազգ. Առաջնորդարանի շէնքին մանրատիպը ընդգրկող յուշանուէր մը, հիւր նախարարուհին նուիրեց իր նախարարութիւնը խորհրդանշող գեղակերտ տախտակ մը: Նշենք, որ Ազգ. Վարչութեան անդամներէն Տիար Վարուժան Տէր Սիմոնեան եւս յուշանուէր մը յանձնեց նախարարուհիին, Ուիլիըմ Սարոյեանի ծննդեան 100ամեակին նուիրուած գիրք մը, որ նոր լոյս տեսած է:

Հրաժեշտի պահուն, ներկաները ունեցան յիշատակի խմբանկար մը:

MINISTER OF DIASPORA AFFAIRS HRANUSH HAKOBYAN VISITS THE PRELACY

On the afternoon of Thursday, November 20, the newly appointed Minister of Diaspora Affairs Hranush Hakobyan visited the Prelacy and met with H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate. Mrs. Hakobyan is in Los Angeles for the annual Armenia Fund Telethon. She was accompanied by Consul General the Honorable Armen Liloyan and a delegation from the Armenian Consulate of Los Angeles.

Upon their arrival Mrs. Hakobyan and guests were greeted by the Prelate and council members, and were led to the reception room where the official meeting took place. The visit continued at the “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall where a number of guests had gathered to welcome Mrs. Hakobyan, including H.E. Archbishop Yeprem Tabakian, Central Executive Council member Mr. Khajag Dikijian, United Armenia Fund president Mr. Harut Sassounian, clergy, Executive Council members, Board of Trustees Chairmen, Ladies Auxiliary members, Board of Regents members, principals and directors, and sponsors.

Master of Ceremonies Archpriest Fr. Vicken Vassilian welcomed the guests then invited Executive Council Vice-Chair Mr. Garo Avakian and Mr. Khajag Dikijian to offer their remarks. Remarks were also offered by Mr. Harut Sassounian, Ladies Auxiliary Chair Mrs. Mariam Karapetian, and Executive Council member Mr. Varoujan Der Simonian who presented Mrs. Hakobyan with a newly published book dedicated to the 100th anniversary of William Saroyan.

The Prelate was then invited to convey his thoughts and remarks, followed by Consul General Liloyan who presented a brief background of the minister then invited her to offer her address.

Mrs. Hakobyan thanked the Prelate and guests for their warm welcome and spoke in detail about the collaboration between Armenia and the Diaspora.

At the conclusion of the program, an exchange of mementos took place between the Prelate and Mrs. Hakobyan.

The reception concluded with a question and answer session.